



**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

15 մարտի 2019 թ.

N 165-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ  
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման 15-րդ կետի 1-ին ենթակետը և ղեկավարելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ղ ղ ղ ղ** է.


Հաստատել Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի մոնիթորինգի 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵՎԱԿՐՈՒՄ

*[Handwritten signature]*

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Հավելված  
Արցախի Հանրապետության  
կառավարության 2019 թվականի  
մարտի 15-ի N 165-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ**

**I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

Մակերևութային ջրերի մոնիթորինգի իրականացումն Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության առջև ծառայում է որպես խնդիրներից է հանդիսանում, որի իրականացումը բխում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի և «Ջրի ազգային ծրագրի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներից:

Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի մոնիթորինգի 2018 թվականի ծրագրի շրջանակներում մշտադիտարկումների միջոցով ուսումնասիրվել է մակերևութային ջրերի որակական հատկանիշները: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա գնահատվել է մակերևութային ջրերի էկոլոգիական վիճակն, ըստ որի՝ հանրապետության գրեթե բոլոր գետային ավազաններում սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները գերազանցում են պղինձը, վանադիումը և ալյումինը: Դրանք հիմնականում ֆոնային բնույթ են կրում: Կարկառ, Խոնաշեն և Վարանդա գետերում, ակունքից գետաբերան, դիտվում է թթվածնի քիմիական պահանջարկի, ցինկի, ամոնիում և նիտրիտ իոնների կոնցենտրացիաների աճ, որը հիմնականում պայմանավորված է կոմունալ-կենցաղային հոսքաջրերի առանց մաքրման գետը թափվելու հետ: Վարդաձոր գետն աղտոտված է կոմունալ-կենցաղային և հանքարդյունաբերական հոսքաջրերով: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, մակերևութային ջրերի էկոլոգիական վիճակի մասին ամբողջական պատկեր ունենալու համար 2019 թվականին նախատեսվում է շարունակել մակերևութային ջրերի մոնիթորինգը:

Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի մոնիթորինգի 2019 թվականի ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված աշխատանքները և գործառույթները կիրականացվեն Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակիցների կողմից՝ Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աջակցությամբ:

Ծրագրի իրականացումը համապատասխան մակարդակով ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության մասնագիտացված կազմակերպությունից խորհրդատվական և ծրագրով նախատեսված աշխատանքներին անմիջական մասնակցություն ցուցաբերելու նպատակներով կներգրավվեն մասնագետներ:



**II. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ծրագրի իրականացման հիմնական նպատակն է՝ մշտադիտարկումների միջոցով Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի էկոլոգա-երկրաբանական առանձնահատկությունների գնահատումը և մոնիթորինգի տվյալների հիման վրա յուրաքանչյուր գետավազանային տարածքի գետերի ջրերի որակի նորմերի սահմանումը, խնդիր ունենալով բացահայտել մակերևութային ջրերի աղտոտվածության փաստացի իրավիճակն ու աղտոտման աղբյուրները և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել բոլոր հավանական աղտոտող նյութերի ցուցանիշները նվազեցնելու ուղղությամբ:

**III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն դաշտային աշխատանքներ և նմուշների լաբորատոր հետազոտություններ:

Ծրագրով նախատեսված 78 դիտայցերը կիրականացվեն աշխատանքային խմբի կողմից՝ նմուշառման 39 դիտակետում, որոնք կընդգրկեն հետևյալ մեծ և միջին մեծության գետերը և ջրամբարները՝

- 1) հինգ մեծ գետեր՝ Թարթառ՝ երեք դիտակետ, Խաչեն՝ երկու դիտակետ, Կարկառ՝ չորս դիտակետ, Վարանդա՝ երկու դիտակետ, Հազարի՝ երեք դիտակետ.
- 2) երկու միջին մեծության գետեր՝ Խոնաշեն՝ երկու դիտակետ, Իշխանագետ՝ երկու դիտակետ.
- 3) վերոնշյալ գետերի միջին մեծության ութ վտակ՝ ԼԱ՝ մեկ դիտակետ, Թուֆսուն՝ մեկ դիտակետ, Ծար՝ մեկ դիտակետ, Վարարակն՝ մեկ դիտակետ, Որոտան՝ մեկ դիտակետ, Աղավնո՝ երկու դիտակետ, Հոչանց՝ մեկ դիտակետ, Ծալուա՝ մեկ դիտակետ.
- 4) մեկ փոքր գետ՝ Վարդաձոր՝ երկու դիտակետ.
- 5) երկու անդրսահմանային գետեր՝ Ողջի՝ մեկ դիտակետ, Ծավ՝ երկու դիտակետ.
- 6) վեց ջրամբար՝ Սարսանգի ջրամբար՝ երկու դիտակետ, Մատաղիսի ջրամբար՝ մեկ դիտակետ, Խաչենի ջրամբար՝ մեկ դիտակետ, Վարանդա 1 (ստորին հիդրոկառույց)՝ մեկ դիտակետ, Վարանդա 2 (միջին հիդրոկառույց)՝ մեկ դիտակետ, Վարանդա 3 (վերին հիդրոկառույց)՝ մեկ դիտակետ:

Դիտակետերի տեղերն ընտրվել են հնարավոր խոշոր աղտոտող աղբյուրներին հարակից հատվածներում: Կախված տեղանքի առանձնահատկություններից դիտակետերի տեղադիրքերը կարող են փոփոխվել:

Նմուշների լաբորատոր հետազոտություններ կատարելու համար տարվա կտրվածքով մակերևութային ջրերից կվերցվեն մոտ 78 փորձանմուշ (յուրաքանչյուր հատվածից նմուշառումը կիրականացվի երկու անգամ): Յուրաքանչյուր վերցված նմուշի համար կորոշվի մինչև 40 ցուցանիշ, այդ թվում՝ ջրաբիմիական հիմնական բաղադրիչներ, ծանր մետաղներ, քլորօրգանական պեստիցիդներ և այլն:

Ծրագրով նախատեսված 78 նմուշների լաբորատոր հետազոտությունները կիրականացվեն Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի

և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված լաբորատորիայում՝ պայմանագրային հիմունքներով:

Վերջում կամփոփվեն ստացված դաշտային և լաբորատոր աշխատանքների արդյունքները և կկազմվի ամփոփ հաշվետվություն Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի էկոլոգիական վիճակի վերաբերյալ:


**IV. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԱԿՆՎԱԿՈՂ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի իրականացումից ակնկալվում է՝ Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի որակի գնահատում, աղտոտման աղբյուրների բացահայտում և պահպանում աղտոտումից, դրանց արդյունավետ օգտագործում և մակերևութային ջրերի մոնիթորինգի բազային տվյալների ստեղծում:

**V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագրի իրականացման համար «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 05 բաժնի 6 խմբի 1 դասի «02. ԱՀ տարածքի մակերևութային ջրերի մոնիթորինգի ծրագիր» ծրագրով նախատեսվել է 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՎՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԱԿԱԼ



Ա. ԼԱԶՐԱՅԱՆ